Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО
УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 2 (40) 2021 Гуманитарные науки

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏՆԵՐՈՒՄ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Ք. Ս

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան
Տիգրան Մեծ 36
e-mail: qnarik.hovakimyan@mail.ru

Ես գտել եմ իմ կյանքի իմաստը՝ օգնելով ուրիշներին իմաստ գտնել իրենց կյանքում:

Վ. Ֆրանկլ

Հոդվածում քննարկվում են տուն-ինտերնատի բնակիչների կյանքի իմաստի և հոգեկան բավարարվածության այն գործոնները, որոնք առավելագույնս նպաստում են նրանց սոցիալական շարժունակությանը, փոխըմբռնմանը, ինքնաարտահայտման հնարավորությունների ընդլայնմանը: Պարզվել է, որ անձի երկու չափումների (Կ. Այզենկ) տեսանկյունով, կյանքի բավարարվածության պարագայում գերակայում են տուն-ինտերնատի բնակիչների հուզական կայունությունը և միջանձնային հարաբերությունները, որոնցով պայմանավորված են նրանց բարձր ինքնագնահատականի դրսևորումները:

Հիմնաբառեր: Տուն-ինտերնատներ, կյանքի բավարարվածություն, երջանկության խնդիր, կյանքի ուղի, տարեց մարդիկ:

Ներկայացված է խմբագրություն 20.10. 2021թ.

Տուն-ինտերնատի բնակիչների կյանքի բավարարվածության սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություններում առավելապես քննարկվում են նրանց հետագա կենսագործունեության անվտանգության, հոգեբանական համատեղելիության և վստահելի հարաբերությունների կազմավորմանը վերաբերվող համալիր խնդիրներ [1, էջ 19]:

Հոդվածի նպատակն է բացահայտել տուն- ինտերնատի բնակիչների կյանքի բավարարվածության գործոնները և կառուցվա-գործառնական

առանձնահատկությունները: Կյանքի բավարարվածության կառուցվածքա-գործառնական վերլուծությունները ցույց են տալիս, որ հիմնախնդիրը ոչ միայն բարդ ու տարողունակ երևույթ է, այլև պահանջում է տարբեր գործոնների համադրման անհրաժեշտություն բազմավեկտորային դիտարկումների հարթակում: Այս տեսանկյունով խնդիրը քննարկելիս ավելի հաճախ մասնագետները կարևորում են, կյանքի բավարարվածության գործառույթները, այն համադրելով դրանց դրսևորման կոնկրետ պայմանների հետ՝ հիմք ընդունելով տարեցների պահանջմունքներիի բավարարումը, հոգեկան անվտանգությունը և սոցիալական ակտիվության մակարդակի պահպանումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս [2, էջ 9], որ տուն-ինտերնատի բնակիչների կյանքի բավարարվածության զգացողությունն ավելի սուր է, քան տանը ապրող կենսաթոշակառուների մոտ՝ պայմանավորված սոցիալական, բժշկական, սոցիալական հոգեբանական խնդիրների բազմազանությամբ:

Անկասկած, կյանքի բավարարվածությունը կախված է նրանից, թե ինչպիսին են կյանքի պայմանները տուն-ինտերնատում, չնայած՝դրանք դեռևս քիչ են, կյանքի բավարավածության մասին լիարժեք պատկերացում կազմելու համար: Իհարկե, տուն-ինտերնատում ապրող մարդիկ տարբերվում են կյանքի գոհունակության, ապրելու իմաստի և իրենց կյանքի բավարարվածության մասին ունեցած պատկերացումներով, քանի որ յուրաքանչյուր անձ գնահատում է վերը նշածները՝ կախված այն բանից, թե նրանք ինչպես են վերաբերում տուն-ինտերնատում գործող կանոններին, միջանձնային հարաբերություններին:

Կյանքի բավարարվածության ուսումնասիրությամբ զբաղվել են Մ. Արգայլը,(երջանկության խնդիրներով) Ա. Ջիդարյանը, Կ.Վ Կոստենկոն, Լ. Վ Կուլիկովը, Դ. Ա. Լեոնտևը, Օ. Վ. Կրասնովան (հասունության և ծերության խնդիրներով), Ն. Ֆ. Շախմատովան (հոգեկան ծերացման խնդիրներով) և այլոք: Իհարկե, «Կյանքի բավարարվածություն» բարդ հասկացություն է, որը պայմանավորված է բազմաթիվ գործոններով. առողջություն, նյութական ապահովվածություն, ընտանիքի բարեկեցություն, սոցիալական կայունություն, բարեհարմարություն, փոխադարձ հարգանք, սոցիալական շփումներ: Ինչպես երևում է կյանքի բավարավածությունը դիտարկվում է տարբեր կողմերով, սկսած նյութական ապահովածությունից, վերջացրած հոգեբանական ընկալումներով, սոցիալական և ընտանեկան փոխհարաբերություններով, այնպիսիք ինչպիսին են՝ սեր, ամուսնություն, ընկերություն [3, էջ 26]:

Չնայած հեղինակների կողմից կատարված ուսումնասիրությունները վերաբերում են կյանքի բավարարվածության խնդրին, սակայն դրանց շարքում չկան հետազոտություններ, որոնցում քննարկվում են տուն-ինտերնատի բնակիչների կյանքի բավարարվածությունը:

Կարելի է փաստել, որ նույնիսկ ամենաբարդ վիճակում մարդը կարող է իր կյանքում գտնել ուրախության աղբյուր: Կյանքից գոհունակություն ստանալու համար պետք է

բացահայտվեն այն իրական հնարավորությունները, որոնք առկա են գուցե և մինչև վերջ չգիտակցված անձնական նախկին փորձում: Կենսափորձի ներուժի ակտվացումը տվյալ պահին և կոնկրետ իրավիճակում նպաստում է ինքնագիտակցության ամրապնդմանը և բարձրացնում է տարեց մարդկանց ինքնագնահատականը: Ըստ Լ.Ի.Անցիֆերովայի, Ռ.Բաթլերի, Ա.Գ.Լիդերսի, Ն.Ֆ. Շախմատովի, Է. Էրիքսոնի մեծ տարիքում մարդու կողմից իր կյանքի ուղու ընդունումը էական դերակատարում է ունենում: Հետագա տարիներին բեղմնավոր կյանքի կարևոր պայման է սուբյեկտի կողմից իր անցած բոլոր փուլերի, իր անցյալի, ներկայի և սպասվող ապագայի ներգրավումն է :

Տուն-ինտերնատի բնակիչների կյանքի բավարարվածությունը սուբյեկտիվ է՝ իր կյանքի վերաբերյալ, որը հաճախ ուղեկցվում է հաճելի ապրումներով, ուրախ հուզական երանգավորումներով: Իհարկե, նրանց կյանքի բավարավածության որոշակի կողմեր արտահայտվում են կայուն վերաբերմունքով, քանի որ բարենպաստ պայմանների առկայության դեպքում Տուն-ինտերնատում աստիճանաբար ձևավորվում են կյանքի բավարարվածության որոշ բաղադրիչներ բազմակի կրկնվող միջանձնային շփումների հիման վրա: Բնակիչների կյանքի բավարարվածությունը կախված է իր անցյալի, ներկայի ու ապագայի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ: Բնակչի կյանքի գոհունակության բարձր աստիճանը հաճախ զուգորդվում կամ նույնականացվում է «երջանկություն», «սուբյեկտիվ հոգեբանական բարեկեցություն» զգացողությունների հետ, որոնք ընդհանուր առմամբ դիտարկվում են որպես հոգեբանական առողջության կարևոր պայման [4, էջ 24]:

Չնայած «Կյանքի բավարարվածություն» հասկացությունը շատ տարողունակ է և տարբեր մեկնաբանություններ նյութ կարող է ծառայել, այսուհանդերձ այն ներառում է մի քանի հիմնական հատկանիշներ, որոնք վերաբերում են. 1)կյանքի և երկար ապրելու նկատմամբ կայուն հետաքրքրություններին, 2) վճռականությանը և նպատակասլացությանը, տուն-ինտերնատում կյանքը հետաքրքիր դարձնելուն, 3) առողջական վիճակին մշտապես հետևելուն, անհրաժեշտության դեպքում համապատասխան դեղեր ընդունելուն, 4)ինքնագնահատականը և տրամադրությունը բարձրացնելուն:

Տուն-ինտերնատի բնակիչները իրենց ապրելակերպը հիմականում որոշում են՝ համեմատելով «թոշակից առաջ և հետո» ստացած բավարարվածության աստիճանից: Բացի դրանից, նրանք առավելագույնս սևեռվում են գոհունակության գործոնի վրա՝ նշված ժամանակահատվածներում: Հասկանալի է, որ կյանքի գոհունակությունը
կախված է այս համեմատության արդյունքից, բացասական ապրումները արտացոլում են ծեր մարդկանց անբավարարվածությունը և ժխտողական վերաբերմունքը նույնիսկ հաճելի միջավայրում [5, էջ 41]:
Ծեր մարդկանց կյանքի բավարարվածության զգացողությունը չի սահմանափակվում միայն առողջության խնդրով, քանի որ նրանց ուշադրության կենտրոնում է նաև երկրի և

ընտանիքի տնտեսական վիճակը, մերձավորների և ընտանիքի անդամների վերաբերմունքը, տուն-ինտերնատի բնակիչների փոխադարձ հարգանքը, փոխվստահությունը և աջակցությունը ամենօրյա շփումներում:

Տուն-ինտերնատի աշխատակիցները պարբերաբար պետք է լսեն բնակիչներին անհատական կյանքի պատմությունները, նրանց դերակատարումները որպես ծնողի և աշխատակցի մինչև տուն-ինտերնատում հայտնվելը: Կյանքի ուղու բացատրություններից հասկանալի կդառնա նրա հետ աշխատելու առանձնահատկությունները: Յուրաքանչյուր անգամ պետք է պարզվի տվյալ բնակչի գոհունակությունը նրա կյանքի տարբեր փուլերով:

Դժվար չէ նկատել, որ բնակիչը միշտ չէ, որ հաջողությամբ կարող է հաղթահարել սոցիալական նոր միջավայրում դեռևս իրեն անհայտ դժվարություններն ու խոչընդոտները: Կյանքի յուրաքանչյուր հաջորդ փուլին անցնելիս՝ մարդը հաղթահարում է հոգեբանական շեմ: Նա պետք է հասկանա անցած տարիները, փոխի աշխարհի մասին իր պատկերացումները, ճշգրտի ապագայի նպատակները: Իսկապես երջանիկ կարելի է համարել նրան, ով ի վիճակի է հանգիստ, հետևողականորեն, առանց հուզական նեղության և ժամանակին տեղափոխվել մի փուլից մյուսը, փոխել իր ինքնագիտակցությունը՝ փոփոխված պայմաններին համապատասխան:

Մեր անհատական զրույցներից պարզվեց, որ «Կյանքը վերսկսվում է վաթսուն անց»: Ծերության տարիներին կյանքից բավարարվածության զգացումը մարդու հոգեբանական առողջության կարևոր ցուցիչ է, որն արտահայտվում է նրա կյանքի նկատմամբ հետաքրքրությամբ և ապրելու անհրաժեշտությամբ[6, էջ 55]:

Բացի դրանից, պարզվեց նաև,որ տուն-ինտերնատի բնակչի մոտ գերակա է հավատն իր սեփական ուժին, համոզմունքին, առօրյա իրավիճակներին վերահսկելու և բավարավածություն ստանալու ձգտումները:

Բնակիչը տուն-ինտերնատում առաջին իսկ օրվանից ընկալում և վերլուծում է իր շրջապատի մարդկանց վերաբերմունքը իր հանդեպ որպես անմիջական միկրոմիջավայր՝ իր բոլոր դրսևորումներով հանդերձ:

Դեռևս բավարար չափով ուսումնասիրած չեն ինտերնատներում նրա բնակիչների կյանքի բավարարվածության ապահովման գործոնները: Այդուհանդերձ, կան հետազոտություններ տարեցների կյանքի բավարարվածության վերաբերյալ: Ինչ վերաբերում է փորձարարական հետազոտություններին, ապա կարելի է արձանագրել, որ, իրոք, ինտերնատներում կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք արդիական են և ուսանելի են ինտերնատների աշխատակիցների համար (Ֆ. Սուսլովա, Ս.Բ. Ժուչկովա, Ե.Պ. Իլին, Ե.Բ. Բալացկի և Օվչարովա):

Վերջին իրադարձություններով պայմանավորված ՀՀ-ում փոխվել է մարդկանց վերաբերմունքը ինտերնատի բնակիչների նկատմամբ, սակայն դեռևս խնդրահարույց է ինտերնատի բնակիչների բավարավածության լիարժեք ապահովումը, նրանց

վերաբերմունքը ինչպես սեփական զավակներին, այնպես էլ աշխատակիցների նկատմամբ: Ահա թե ինչու Տուն-ինտերնատի բնակիչների մոտ պարբերաբար նկատվում են ագրեսիվության, հարձակվողականության և նեգատիվ վերաբերմունքի դրսևորումներ: Այս երևույթներով պայմանավորված կատարվել են փորձարարական հետազոտություններ պարզելու ինտերնատի բնակիչների կյանքի գոհունակությունը: Փորձարարական հետազոտությունը կատարվել են մի քանի տուն-ինտերնատներում (Վանաձոր,Գյումրի,Երևան), 2017- 2020 թվականներին: Հետազոտություններին մասնակցել են ինտերնատների 300 բնակիչ, 36-50, 51-62, 63 տ և ավելի տարիք ունեցողներ:

Ուսումնասիրության նախնական փուլում պարզել ենք տուն- ինտերնատի բնակիչների ընդհանուր վերաբերմունքը աշխատակիցների նկատմամբ, իրենց կյանքի, իրենց զավակների այցերին և զրույցի միջոցով ստեղծել ենք վստահության մթնոլորտ:
Ստորև աղյուսակի տեսքով ներկայացնենք ինտերնատի բնակիչների կողմից աշխատակիցների նկատմամբ դրսևորած վերաբերմունքին և վստահությանը՝ միջինացված ցուցանիշներով:

Աղյուսակ 1. ներքին աշխատակիցների կարծիքներ

Որքա՞ն են վստահելի աշխատակիցների ներքին ծառայությունները (հոգեբան, սոցիալական աշխատող, բժիշկ, գրադարան և այլն)					
	Վանաձոր-Տարեցների տուն	Վանաձոր Հույսի տուն	Գյումրու տուն-ինտերնատ	Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ	Նոր-Նորքի տուն-ինտերնատ
Երբեք	-	-	-	-	-
Հազվադեպ	**40%**	**80%**	-	**20%**	**40%**
Հաճախ	**60%**	-	**80%**	**80%**	**60%**
Չգիտեմ	-	-	**20%**	-	-
Դժվարանում եմ պատասխանել	-	-	-	-	-
Հրաժարվում եմ պատասխանել	-	-	-	-	-
Այլ	-	**20%**	-	-	-

Ինչպես տեսնում ենք «Դժվարանում եմ պատասխանել» և «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակներն չեն ընտրվել: Թերևս դա կարող են մեկնաբանել որպես վստահության պակաս, վախ ղեկավարությունից և աշխատակիցներից, որոնցով պայմանավորված կազմակերպել ենք հարցազրույց յուրաքանչյուր բնակչի հետ՝ կանխելով հնարավոր վտանգները: Հարցազրույցը վերաբերել են վարչական աշխատակազմին և սպասարկող անձնակազմին, տնային այցելություններին, բնակիչների միջանձային հարաբերություններին, ապրելակերպին, սննդին,

առողջությանը, նոր բնակավայրին հարմարվելուն: Հարցազրույցը կազմակերպվել է պարբերաբար:

Այժմ կյանքի բավարարվածության մեթոդիկայով ուսումնասիրենք տուն-ինտերնատի բնակիչների գոհունակությունը և կենսական բավարավածությունը միջանձնային հարաբերություններում: Փորձարարական հետազոտություն անցկացրել ենք Գյումրու տուն-ինտերնատում, 11 բնակիչների հետ, որից՝ 5-ը կին, 6-ը՝ տղամարդ: Հետազոտության համար, կիրառել ենք կյանքի բավարարվածության մեթոդիկան:

Աղյուսակ 2.

Բնակիչների թվաքանակի բաշխվածությունը ըստ կյանքի բավարարվածության

Բնակիչների թվաքանակի բաշխվածությունը ըստ կյանքի բավարարվածության ստորև նշած բաղադրիչների				
Կյանքի հետաքրքրություն	Նպատակներին հասնելու հետևողականություն	Համաձայ նեցվածություն	Իրեն և սեփական արարքների դրական գնահատում	Տրամադ ության ընդհա նուր ֆոնը
5	2	3	2	6
3	3	2	4	6
4	1	3	3	5
5	5	4	6	5
3	4	6	6	8
4	3	4	4	7
4	6	4	4	2
6	3	1	1	6
5	3	6	8	6
4	6	3	4	4
6	4	4	5	5
Միջինացված տվյալներ				
4,45	3,63	36,36	42,45	5,45

Աղյուսակ 2-ից երևում է, որ հարցվածների մեծամասնությունը (11- ից 8 հոգի),որոնք բնակվում են տուն-ինտերնատում, ունեն կյանքի բավարարվածության ցածր ցուցանիշ (25 միավորից ցածր): Սա ցույց է տալիս հուզական լարվածության բավականին բարձր մակարդակ և ցածր հուզական կայունություն, իսկ որոշ փորձարկվողներ ցածր ինքնագնահատական ունեին:

Այսպիսով, կյանքի բավարարարվածությունը տարեց մարդկանց մոտ կախված է մի շարք գործոններից՝ առողջություն, տնտեսական և ընտանեկան դրություն, դրական գործունեություն, ինչպես նաև հաղորդակցումը շրջապատում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аргайл М. Психология счастья. СПб: Питер, 2003. 271 с.

2. Поднебесная Е.Б. Особенности эмоционального состояния лиц поздних возрастов, проживающих в различных социальных условиях (условия дома-интерната и ситуация одинокого проживания в домашних условиях). / Автореф. дис. канд. псих. наук: 19.00.13 — М., 2006. — с. 24-25

3. Альперович В.Д. Социальная геронтология.- Ростоа-на-Дону: Феникс.1997. – 576 с.

4. Анцыферова Л.И. Поздний период жизни человека: типы старения и возможности поступательного развития личности. М.: Изд-во «Институт психологии РАН», 2004. –

5. Висьневска-Рошковска К. Новая жизнь после шестидесяти: Пер.с польк./ Общ.ред. и предлисл. А.В.Толстых. – М: Прогресс, 1989 – 263 с.: ил.

6. Волынская Л.Б. Социокультурная и личностная адаптация человека на различных стадиях жизненного цикла: учебное пособие.- М: Флинта: НОУ ВПО «МПСИ», 2012. – 168с

РЕЗЮМЕ

ФАКТОРЫ ПСИХОЛОГИЧЕСКОГО УДОВЛЕТВОРЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ДОМАХ-ИНТЕРНАТАХ

ОВАКИМЯН К.С.

В статье рассматриваются факторы смысла жизни и психического удовлетворения жителей дома-интерната, которые максимально способствуют их социальной мобильности, взаимопониманию, расширению возможностей самовыражения. При удовлетворенности жизнью преобладают эмоциональная стабильность жителей дома-интерната и межличностные отношения, которыми обусловлены проявления их высокой самооценки:

Ключевые слова: Дома престарелых, удовлетворенность жизнью, проблема счастья, образ жизни, пожилые люди.

SUMMARY

SUFFICIENT LIFE PSYCHOLOGICAL FACTORS IN HOMES OF PENSIONS OF THE REPUBLIC OF ARMENIA

HOVAKIMYAN K.S.

The aim of the article is to reveal the life satisfaction factors of the residents of the nursing home and construction-operational features.

Structural-functional analyzes of life satisfaction show that the problem is not only complex and capacious, but also requires the need to combine different factors in a multi-vector observation platform.

When discussing the issue from this point of view, the functions of life satisfaction are of more importance. They are combined with specific conditions of exclusion based on meeting the needs of the elderly, mental security, and maintaining a level of social activity.

Our study showed that the feeling of life satisfaction of the residents of the nursing home is more acute than that of the pensioners living in the families, due to the variety of social, medical and social psychological problems.

Undoubtedly, life satisfaction depends on the living conditions in the nursing home, although they are still not enough to get a complete picture of life satisfaction. Of course, people living in a nursing home differ in their perceptions of life satisfaction, the meaning of life, their life satisfaction, as each person evaluates the above, depending on how they relate to the rules of the nursing home, interpersonal relationships.

From the very first day, the resident perceives և analyzes the attitude of the people around him / her towards him / her as a direct micro-environment, with all its manifestations.

Due to the recent events, the attitude of the people towards the residents of the nursing home has changed, but it is still problematic to fully ensure the satisfaction of the residents of the nursing home, their attitude towards their own children and employees. This is why the residents of the nursing home regularly show manifestations of aggression and negative attitude. Due to these phenomena, experimental studies were conducted to determine the life satisfaction of the residents of the nursing home. The experimental research was conducted in several nursing homes (Vanadzor, Gyumri, Yerevan) in 2017-2020. 300 residents of nursing homes, 36-50, 51-62, 63 years old took part in the research. In the initial stage of the study, we found out the general attitude of the residents of the nursing home towards the employees, their lives, the visits of their children.

We created an atmosphere of trust through conversation. The results showed that the "I find it difficult to answer" և "I refuse to answer" options were not selected. We can interpret it as a lack of trust, fear of management, employees, due to which we have organized an interview with each resident to prevent possible dangers.

Keywords: Nursing homes, life satisfaction, the problem of happiness, the way of life, the elderly.

Տպագրության է երաշխավորել պրոֆ. Վլադիմիր Կարապետյանը 30.06.2021թ.